

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ 510-ԱՄՅԱԿԻՆ (1512-2022).
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Բանալի բառեր՝ Հակոբ Մեղապարտ, հայ գրատպություն, 510-ամյակ, համակարգ, մատենագիտություն, գիտաժողովներ, Արցախ, գրադարաններ, ժառանգության պահպանություն, միջազգային համագործակցություն:

Keywords: Hakob Meghapart, Armenian book printing, 510-th anniversary, system, bibliography, conferences, Artsakh, libraries, heritage preservation, international cooperation.

«Ժառանգության պահպանություն հանուն կայուն ապագայի» միջազգային գիտաժողովում՝ նվիրված հայկական տպագրության 510-ամյակին, տողերիս հեղինակի զեկուցման հիման վրա ներկայացվող հոդվածն ունի գրքագիտական, մատենագիտական և գրադարանագիտական կարևոր նշանակություն և բխում է բարձրագույն մասնագիտական կրթության ու գիտության զարգացման ժամանակակից խնդիրներից.

1. Գրքամատենագիտական աղբյուրների ուսումնասիրության հիման վրա ցույց տալ տպագրական արվեստի հետ հայերի ամենավաղ առնչությունը և գլխավորապես հայ տպագրության (տպագիր մշակույթի) զարգացման պատմական ընթացքը XVI-XXI դդ.:

2. Անդրադառնալ հայկական գրատպության պատմությանը նվիրված գիտաժողովներին ու դրանց վերաբերյալ հրապարակումների նորովի գնահատմանը, որոնք գիտական առումով նորություն են և չափազանց կարևոր:

3. Հանուն կայուն ապագայի՝ հայկական մշակութային ժառանգության անվտանգությունը ապահովելու տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն տալ արցախյան նոր պատերազմի (2020 թ. սեպտեմբերի 27-նոյեմբերի 9) հետևանքով աղբյուրների հսկողության տակ մնացած հայկական գրադարանները (փաստաթղթային-տեղեկատվական ֆոնդերը) հայերիս վերադարձնելու հարցին:

Աղբյուրները վկայում են, որ տպագրական արվեստի հետ հայերի ամենավաղ առնչությունը գալիս է XIV դարից: Այսպես. Չինաստանում XVII դարի ռուսական հյուպատոս (ծագումով մոլդովացի) Նիկոլայ Գավրիլովիչ Սպաֆարին (1636-1708) տպագրության «չինական գաղտնիքը» Արևելքից Եվրոպա տարածելու գործում հիշատակել է նաև հայագի Անտոնին: Իր գրքի «Աշխարհի՝ Ասիա կոչվող առաջին մասի նկարագրությունը» գլխում նա գրել է. «Եվ այն հաստատ է, որ մետաքսի արտադրությունը չինացիներից են մյուս պետությունները սովորել, և ոչ միայն այդ, այլ նաև թնդանոթներ ձուլելը, ծովագնացությունը՝ մագնիսի օգնությամբ, ինչպես և գրքեր տպագրելը..., երբ կալմիկները (մոնղոլները – Գ. Ս.) և թաթարները գրավեցին Չինաստանը, նրանց հետ Չինաստան եկան հայր Օդերիկը, Անտոն հայր և Մարկո Պավել (Պոլո – Գ.Ս.) վենետիկցի և ճշմարիտ, նրանք Չինաստանից Եվրոպա բերեցին այդ արվեստները» [Спафарий–Милеску, 1960, 184]: Իսկ ֆրանսիացի գիտնական Պ. Գյուսմանը 1916 թ. կարծիք է հայտնել, թե տպագրությունը Եվրոպա կարող էին բերել փոքրասիական և կովկասյան ժողովուրդները, օրինակ՝ հայերը, թուրքերի և մոնղոլների ճնշումներից նահանջելով արևմուտք [Владимиров, 1988, 95-96]: Ըստ Գյուսմանի՝ մի խումբ հայեր, ույզուրների մոտ սովորելով տպագրության ամենակատարյալ ձևերը, մեկնում են Նիդերլանդներ, ուր ապրում էր Լաուրենս (Լավրենտի) Յանսզոն Կոստերը (1405-1484)՝ եվրոպական գրատպության ենթադրվող հիմնադիրներից մեկը Յոհան Գուտենբերգից (1394/1399-1468) առաջ: Սակայն մեր ուսումնասիրությունները և գրքագիտության նորագույն տվյալները հաստատում են, որ Նիդերլանդների Հադլեմ քաղաքի վանական Կոստերը տպագրական տեխնիկայի գաղտնիքն իմացել է արևելքից եկած հայ գաղթականներից [История книги, 1998, 50]: Սա, մեր կարծիքով, ցնցող փաստ է ընդհանուր հայագիտության և արդի գրքագիտության համար:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ տպագրական գյուտը ոչ միայն ժողովուրդների պատմամշակութային փոխգրգռացումների կամուրջը հանդիսացավ, այլև՝ սեպագրական և ձեռագրական հարուստ ժառանգությունը միավորեց հետագա դարաշրջանների գրատպական ու լեզվական մշակույթների զարգացումների մեջ: Իսկ նորագույն ժամանակներում խթանեց էլեկտրոնային (ինտերնետային) հաղորդակցական կապերի և տեղեկատվական բազմազան աղբյուրների առաջացմանն ու «թվայնացմանը»:

Հայ տպագրության օրրանը Վենետիկն է (Իտալիան), ուր 1512 թ. Հակոբ Մեղապարտը [Իշխանյան, 1982] հիմք դրեց հայալեզու-մեսրոպատառ առաջին տպագիր հրատարակությանը՝ «Ուրբաթագիրք» վերնագրով: Այնուհետև (1512-13 թթ.) Հակոբը տպագրում է ևս չորս գիրք. «Պատարագատետր» (կամ «Պատարագամատոյց»), «Աղթարք», «Պարզատոմար» և «Տաղարան»: Փաստորեն Հակոբի շնորհիվ հայերը ոչ միայն եվրոպացի շատ ազգերից առաջ, այլև նախկին Խորհրդային Միության ժողովուրդներից ու ներկայիս ԱՊՀ երկրներից առաջինն էին, որ իրականացրին ազգային լեզվով տպագրություն: Կարելի է հաստատել, որ **Հակոբ Մեղապարտը ոչ միայն հայկական գրատպության, այլև՝ տպագրական քաղաքակրթության սկզբնավորման հիմնադիրը հանդիսացավ հայ մշակույթի պատմության մեջ:** XVI դարում հայկական գրատպության զարգացման գործում աչքի ընկնող դեր են խաղում Կ. Պոլսի (1567 թ.) և Հռոմի (1584 թ.) հայկական տպարանները: XVII-XVIII դդ. հայկական գրատպությունը թևակոխում է նոր շրջան՝ նոր բովանդակություն հաղորդելով տպագրական մշակույթի զարգացմանն ու տարածմանը: Հայկական տպագրական արվեստի մյուս կենտրոնները դարձան Լվովը (1616 թ.), Սիլանը (1621 թ.), Փարիզը (1633 թ.), Լիվոռնոն (1644 թ.), Մարսելը (1672 թ.), Լայպցիգը (1680 թ.), Վենետիկը (1686 թ.): Նոր Զուղան (1638 թ.), Ամստերդամը (1660 թ.), Լոնդոնը (1736 թ.), Կ. Պոլսը (1792 թ.), Զմյուռնիան (1759 թ.), Մադրասը (1772 թ.), Էջմիածինը (1771 թ.), Սանկտ-Պետերբուրգը (1781 թ.), Նոր Նախիջևանը (1789 թ.), Աստրախանը (1796 թ.) և այլ քաղաքներ:

XIX-XXI դարում հայ գրատպական կենտրոններ են հիմնվում ինչպես Եվրասիայի, այնպես էլ Ամերիկայի ու Աֆրիկայի երկրներում: Գրատպության և տպագրական քաղաքակրթության զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցան Վիեննայի (1812 թ.), Բոմբեյի (1810 թ.), Երուսաղեմի (1833 թ.), Կահիրեի (1865 թ.), Բաքվի (1872 թ.), Ալեքսանդրիայի (1888 թ.), Ժնևի (1891 թ.), Աթենքի (1892 թ.), Թեհրանի (1894 թ.) Նյու Յորքի (1857 թ.), Բոստոնի (1899 թ.), ինչպես նաև Շուշիի (1828 թ.), Մոսկվայի Լազարյան ճեմարանի (1828 թ.), Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի (1823 թ.), Վանի (1858 թ.), Մուշի (1863 թ.), Սեբաստիայի (1875 թ.), Երևանի (1876 թ.) և Ալեքսանդրապոլի (1876 թ.) հայկական տպարանները:

Մայր Հայաստանը գրքի և տպագրական գործի զարգացման ծաղկուն կենտրոն դարձավ Խորհրդային և հետխորհրդային շրջաններում, երբ սկսեցին հիմնադրվել տասնյակ հրատարակչություններ. «Հայաստան» (1921 թ.), «Հայաստանի գիտությունների ակադեմիա» (1943 թ.), «Լույս» (1964 թ.), «Խորհրդային գրող» (1976 թ.), որը 1991 թ.-ից կոչվել է «Նաիրի», «Արևիկ» (1986 թ.), «Հայկական սովետական հանրագիտարան» (1965 թ.), «Զանգակ-97» (1997 թ.), «Հայաստանի գրողների միություն» (2001 թ.) և այլն: Հետաքրքիր է նշել, որ 1920-ական թվականներին, երբ դարասկզբի առաջին տասնամյակների հեղափոխական ու պատերազմական ծանր իրադարձություններից հետո նպաստավոր պայմաններ են ստեղծվում տպագրա-հրատարակչական գործի զարգացման համար, նույնիսկ երգեր են հյուսվում այդ կարևորագույն գործին նվիրված: Այդ մասին է վկայում «Մուրճ»-ում տպագրված Ա. Բաբասյանի «Գրաշարի երգը» եզակի բանաստեղծությունը՝ ժամանակաշրջանի փայլուն նկարագրությամբ և ապագայի հանդեպ ունեցած լուսավոր հավատով.

Գրաշարի երգը

Ինձ հարագատ պոետների երգերն էռուն, կրակոտ

ես կշարեմ տառակալի անկյունում.

կերգեմ նրանց բառերը հուր ու խրոխտ,

զիլ կկանչեմ նրանց երգը անդադրում:

Իմ – բանվորիս ապրումները բոցավառ

ես կխառնեմ մեքենայի երգերին՝
աշխատանքի համերգի հետ մի ալար-
ես վերջ կուտամ հին ու դաժան վերքերին:
Ներկ ու արճիճ, և դուք տառե՛ր փոշոտած,
ես ձեզանով ընկերներին լույս կուտամ,
մեր նոր կյանքի նոր գործերով հիացած,
ես նոր կյանքին, ազատ կյանքին լույս կուտամ [Մուրճ, 1923, № 3, 11]:

Գրահրատարակչական առանձնահատկություններով, կրթության ու գիտության զարգացման ոլորտներում կարևոր նշանակություն են ձեռք բերել նաև բուհական և ժամանակակից էլեկտրոնային տեխնոլոգիական միջոցները: Այժմ հայկական տպարաններ են գործում նաև սփյուռքի հայաշատ կենտրոններում՝ Վենետիկում, Վիեննայում, Երուսաղեմում, Կահիրեում, Հալեպում, Կ. Պոլսում, Նոր Զուղայում, Լոս Անջելեսում, Մոֆիայում, Փարիզում, Նյու Յորքում, Բեյրութում, Մոսկվայում և այլուր՝ նպաստելով ազգային լեզվի պահպանմանն ու տպագիր մշակույթի տարածմանը, հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդմանը: «Մեզի համար,- գրել է Գարեգին Բ. Կաթողիկոսը,- Հայ գրքի հրատարակությունը ազգային, կրոնական, մշակութային, քաղաքակրթական առաքելության հարց է: Գոյատևման պայքարի հարց է: Լինելության խնդիր է» [Գարեգին Բ, 1990, 145]:

Հետևապես, հայ ժողովրդի գրավոր մշակույթի մասին տեղեկատվական լայն պատկերացում կազմելու համար պետք է օգտվել տարբեր դարաշրջաններում ստեղծված տարատեսակ մատենագիտություններից (իսկ դրա համար պետք է ունենալ գրադարանային-մատենագիտական անհրաժեշտ գիտելիքներ և տեղեկատու աղբյուրներից օգտվելու ունակություններ), որոնց միջոցով հեղինակները ձգտել են պահպանել ազգային-մշակութային ժառանգության գենետիկական կապը՝ դրանք շաղկապելով համաշխարհային գրքարվեստի, գրադարանագիտական և գրքագիտական մտքի զարգացումների հետ: Այդ առումով առանձնակի նշանակություն ունեն սեպագիր, ձեռագիր և տպագիր գրքերին ու պարբերական մամուլին նվիրված բազմաթիվ մատենագիտությունները՝ ստեղծված Հայաստանում, Արցախում և հայկական սփյուռքում: Հատկապես ուշադրության են արժանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հրատարակած «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի» տասնհատորյակը (Հ. Ա. – Ժ, 1984-2019 թթ.) և 1512-1940 թթ. ընդգրկող Հայաստանի ազգային գրադարանի (ՀԱԳ) հրատարակած «Հայ գրքի» վեցհատորյա (Հ. 1-6, 1967-2018 թթ.) հետադարձ մատենագիտությունները:

Այդպիսով, **հայկական գրատպության պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա զարգացման ընթացքը կրել է համակարգային բնույթ:** Գրատպության շնորհիվ ստեղծվել է հսկայածավալ մատենագիտական գրականություն՝ հասարակության և ընթերցողների լայն շրջանների համար հանդիսանալով տեղեկատվության և գիտելիքի անսպառ աղբյուրներ: Աչքի են ընկնում խորը պատմականությամբ, լեզվական առանձնահատկություններով և ուսուցողական անգնահատելի նշանակությամբ: Դասակարգված են փաստաթղթատեղեկատվական համակարգերում և իրենց հարուստ բովանդակությամբ ու գործառնություններով ազդ(ել)ում են միջմշակութային և սոցիալական հաղորդակցությունների զարգացման վրա: Այդպիսիներից են նաև Ա. Սալմասյանի (1888-1971 թթ.) «Հայկական մատենագիտությունը» (1969 թ.), Հովհ. Պետրոսյանի (1892-1961 թթ.) «Հայ պարբերական մամուլի բիրլիոգրաֆիան» (Հ. 1-3, 1954-1957 թթ.), Հ. Անասյանի (1904-1988 թթ.) «Հայկական մատենագիտությունը» (Հ. 1-3, 1959-2004 թթ.), Հ. Դավթյանի (1919-1983 թթ.) «Աշխարհաբար գիրքը հայ տպագրության սկզբից մինչև 1850 թվականը» (1964 թ.) և այլն:

Հայկական գրատպության զարգացման պատմությունը վերաիմաստավորելու մեթոդաբանական տեսանկյունից ներկա հոդվածում նպատակ ենք դրել նաև անդրադառնալ գրատպության վերաբերյալ գիտական հետաքրքրություն ներկայացնող մի շարք հոբելյանական գիտաժողովներին ու դրանց վերաբերյալ հրապարակումներին: Նախ՝ չորջանցելով դեռ 1895 թ. Վենետիկում հրատարակված Գ. Զարբհանսյանի (1827-1901 թթ.) «Պատմություն հայկական տպագրության» գրքի անչափ կարևորությունը, անհրաժեշտ է նշել, որ հայ գրքի և տպագրության պատմության վերաբերյալ հրատարակությունների **նոր սկիզբ** դրվեց 1912 թ., երբ նշվում էր հայկական տպա-

գրության 400-ամյակը: Այդ առթիվ արժանի են հիշատակման Լեոյի (1860-1932 թթ.) «Հայ գրքի տոնը» (Թիֆլիս, 1912 թ.), Թեոդիկի (1873-1928 թթ.) «Տիպ ու տառը» (Կ. Պոլիս, 1912 թ.), Արշակ Ալպոյաճյանի (1879-1962 թթ.) Նյու Յորքում հրապարակած հոդվածաշարը (1912 թ.) [Ալպոյաճյան, 1912, № 2, էջ 43-45; № 3, էջ 64-67, № 4, էջ 87-91; № 5, էջ 112-117], հետագայում՝ Գ. Լևոնյանի (1872-1947 թթ.) և Ռ. Իշխանյանի (1922-1995 թթ.) ուսումնասիրությունները [Իշխանյան, 1981; Լևոնյան, 1958]:

Անդրադառնալով, մասնավորապես, հայ տպագրության 400-ամյակին նվիրված Արշակ Ալպոյաճյանի հոդվածին՝ իմանում ենք, որ հայկական երկրորդ տպարանի հիմնումը Կ. Պոլսում (1567 թ.) այնքան էլ հեշտ չի եղել: Որովհետև, ըստ Ալպոյաճյանի, թուրքական իրականության մեջ «տիրապետող տարրը կը գտնվեր կատարյալ տգիտության մեջ, և թշնամի էր ամեն քաղաքակրթության ձեռնարկին» [Ալպոյաճյան, 1912, № 3, 67]: Նույնիսկ XV դ. Կ. Պոլսում հիմնված հրեաներն իրենց գրքերը տպագրում էին գաղտնաբար (Հրեական առաջին գիրքը՝ «Աստծոյ ժողովրդին պատմությունը» Կ. Պոլսում տպագրվել է 1490 թ.): Ինչպես նշում է Ա. Ալպոյաճյանը, սրա գլխավոր ապացույցը նաև այն է, որ «Թուրքերը՝ Հրեաներեն 240 և Հայերեն 160 տարի հետ, 1726 թ. հազիվ առաջին անգամ տպագիր գիրք մը կունենային, այն էլ ամենամեծ դժվարություններով» [Նույն տեղում, 67]:

Այնուհետև, 1962 թ. դեկտեմբերի 25-ին Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում տեղի է ունենում գիտական նիստ՝ նվիրված հայկական տպագրության 450-ամյակին [Անդրեասյան, 1963, 297-298]: Նստաշրջանը բացել է Մատենադարանի տնօրեն Լևոն Խաչիկյանը: Նիստում ծավալուն զեկուցմամբ հանդես են եկել Արամ Բաբայանը [Բաբայան, 1963, 31-44], Ռաֆայել Իշխանյանը, ում զեկուցումը նվիրվել է Հակոբ Մեղապարտի անձի և գործունեության հարցերին, ինչպես նաև Ուկրաինայի գիտությունների ակադեմիայի գիտաշխատող Յարոսլավ Դաշկևիչը և ուրիշներ: Պետք է ընդգծել, որ Յա. Ռ. Դաշկևիչը գնահատելի խոսք է ասել Լվովի հայկական տպարանի դերի ու նրա հիմնադիր Հովհաննես Քարմատանենցու մասին և նշել, որ Լվովի տպարանը «Սովետական Միության տերիտորիայում առաջին հայկական տպարանն է եղել» [Անդրեասյան, 1963, 298]: Այստեղ է 1616 թ. հրատարակվել Հովհ. Քարմատանենցի առաջին գիրքը՝ «Մաղմուսարանը», որը պահպանվում է Վենետիկի Մխիթարյան Մատենադարանում, իսկ 1618 թ.-ին՝ հայատառ-դպչադերեն «Աղոթագիրքը»:

Հայկական գրատպության պատմությանը նվիրված հոբելյանական գիտաժողովներ են անցկացվել XXI դարի առաջին տասնամյակներում, որոնցից երկուսը՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում՝ տողերիս հեղինակի նախաձեռնությամբ: Առաջինը կայացել է 2002 թ. ապրիլի 19-ին՝ նվիրված հայ տպագրության 490-ամյակին, որին ներկա են եղել շուրջ 130 մասնակիցներ, այդ թվում 10 զեկուցողներ [Սուքիասյան, 2002, № 83, 6]: Բացման խոսքով հանդես է եկել համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Հր. Չվլախյանը: Երկրորդը՝ նվիրվել է հայկական գրատպության 500-ամյակին և կայացել է 2010 թ. ապրիլի 15-16-ին: Գիտաժողովի մասնակիցների թիվը կազմել է 210 մարդ, այդ թվում 30 զեկուցողներ [Հայկական տպագրության 500-ամյակը, 2010]: Բացման խոսքով հանդես է եկել ՀՊՄՀ ռեկտոր, պրոֆեսոր Ա. Ա. Ղուկասյանը: Հայկական գրատպության 500-ամյակը մեծ հանդիսավորությամբ նշվել է նաև Շուշիում՝ 2012 թ. սեպտեմբերի 17-19-ին կայացած միջազգային գիտաժողովում [Շուշին՝ հայկական մշակույթի օջախ, 2014]: Ողջույնի խոսքերով հանդես են եկել ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար Նարինե Աղաբալյանը: Զեկուցողների թիվը՝ 24: Իսկ 2018 թ. հուլիսի 12-ին Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում Ժուռնալիստների միության դահլիճում նշվեց Շուշիի գրատպության 190-ամյակը [Սուքիասյան, 2018, № 142, 4]՝ վերաթևոթելով Շուշիի պատմական դերը ազգային մշակույթի զարգացման մեջ: Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված մի շարք միջոցառումներ էլ կազմակերպվել են հայկական սփյուռքում՝ Բելյուրոնում [Հայկազեան համալսարան, 2014]:

Գիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ վերոհիշյալ հոբելյանական գիտաժողովները, նրանց մասին վկայող հրապարակումները, ինչպես նաև Վ. Դևրիկյանի ու Գ. Սուքիասյանի աշխատություններն [Դևրիկյան, 2012, 2014, 2016; Սուքիասյան, 2013] ունեցել և ունեն ընդհանուր հա-

յագիտական, սփյուռքագիտական ու արցախագիտական կարևոր նշանակություն՝ պատմական, տեսական ու մեթոդական հարցերի արտացոլումներով: Հայ գիրքը, կազմելով համաշխարհային տեղեկատվական մշակույթի անբաժան մասը, բազմաթիվ անգամ ներկայացվել է նաև գրքի միջազգային ցուցահանդեսներում ու փառատոններում և ամենուր արժանացել բարձր գնահատականի: Իսկ 2015թ. Վարշավայում կայացած գրքի միջազգային փառատոնում նշվել է, որ «Հայերն ունեն փառավոր մշակույթ» (ըստ «Հ1» հեռուստաալիքի, 18. 05. 2015թ.):

Հետևաբար, հանուն կայուն ապագայի (ընդգծումը՝ Գ. Ս.)՝ հայկական մշակութային ժառանգությունը պահպանելու և ապագա սերունդներին փոխանցելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել գրադարանային-տեղեկատվական և գիտակրթական քաղաքականության զարգացման նորագույն միտումները՝ այդ ժառանգության անվտանգությունը ապահովելու համար: Այս տեսանկյունից ներկա հոդվածում խնդիր ենք դրել նաև անդրադառնալ **Արցախյան նոր պատերազմի** (2020 թ. սեպտեմբերի 27-նոյեմբերի 9) հետևանքով աղբյուրների հսկողության տակ մնացած հայկական գրադարանների՝ հայ գիրքն ու գրադարանային ֆոնդերը հայերիս վերադարձնելու գրադարանագիտական հարցին և ոչ միայն:

Այսպես, համաձայն Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության՝ մեզ տրամադրած 2021 թ. մայիս-հունիսի տվյալների, Արցախի վերահսկողությունից դուրս են մնացել 124 գրադարաններ, այդ թվում Շուշիի և Հադրութի կենտրոնական և Բերձորի քաղաքային գրադարանները՝ 68400 գրքային ֆոնդով: Ինչպես նաև՝ 121 դպրոցական գրադարաններ, այդ թվում Ասկերանի շրջանի 8, Մարտակերտի շրջանի 7, Մարտունու շրջանի 7, Շուշիի շրջանի 4, Հադրութի շրջանի 28, Քարվաճառի շրջանի 15 և Քաշաթաղի շրջանի 52 գրադարաններ, որոնց գրքային ֆոնդը կազմել է 548600 միավոր: Բոլոր ֆոնդերի ընդհանուր գումարը կազմել է 617.000 միավոր գրականություն, որոնց գոյության մասին տեղեկություններ չկան: Գրադարանների ու գրքային մշակույթի մասին այսպիսի փաստեր (միայն հայերին վերաբերող), մեր կարծիքով, դեռ չի գրանցվել վերջին 100 տարում:

Բացի վերը նշվածներից, աղբյուրների հսկողության տակ են մնացել Շուշիի «Կաճառ» գիտական կենտրոնի (ղեկավար՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Մհեր Հարությունյան) 30000 գրքային ֆոնդով գրադարանը, 150 անուն ամսագրեր (կազմելով 15000 միավոր), 190 անուն թերթեր (կազմելով 38000 միավոր), 1000000 արխիվային նյութեր, 90000 միավոր լուսանկարներ, 40 միավոր ալբոմներ, 120 միավոր աուդիոձայնագրություններ և 40 միավոր տեսաձայնագրություններ: Մի խոսքով՝ կրթության, գիտության, պատմության և ընդհանուր մշակույթի վերաբերյալ տեղեկատվական հսկայածավալ ռեսուրսներ, որոնց ճակատագիրը նույնպես անհայտ է. թալանվել կամ ոչնչացվել են: Այս ամենը հաստատում են Աղբյուրների շարունակվող հակահայկական ու հայատյաց քաղաքականության [Մարտիրոսյան, 2009] մասին շրջանցելով միջազգային և հեղինակային բոլոր օրենքներն ու ֆորումները [Սուքիասյան, 2012, № 180, 6; Шрайберг, 2007; Соколов, 2019, № 3, 231-247; Богуславский, 1979; Столяров, 2007]:

Մեր կարծիքով, համաձայն գործող օրենքների և ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշումների (ներառյալ 1992թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնած «**Աշխարհի հիշողություն**» ստեղծելու միասնական ծրագիրը), որոնց շրջանցելը պարզապես անկարելի է, հայկական մշակութային ժառանգությունը ենթակա է վերադարձման և այդ խնդիրը պահանջում է հրատապ լուծում: Իսկ խնդրո առարկա հարցում, միջազգային գրադարանային հանրության աջակցության ու համագործակցության տեսանկյունից, «Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի» խորագրով գիտաժողովը՝ նվիրված հայկական գրատպության 510-ամյակին, նույնպես լավագույն առիթ է:

Այսպիսով, նշելով Հայկական գրատպության հերթական 510-ամյա (1512-2022) հոբելյանը [Սուքիասյան, 2021, № 196, 1, 6], վստահ կարելի է ասել, որ մենք ունենք դարերով ձևավորված ու համաշխարհային մասշտաբով զարգացող տպագրական-տեղեկատվական քաղաքակրթություն: Հետևապես, այդ քաղաքակրթությունը պահպանելու և դարից դար սերունդներին փոխանցելու համար պետք է կարևորել ազգային մշակույթի անվտանգության ապահովումը, գրադարանային ֆոնդերի համալրումն ու գրադարանային գործի կառավարման համակարգային զարգացումը, գրականության և ընթերցանության հասարակական դերի էլ ավելի բարձրացումը: Պետք է խորապես գիտակցել գրքի («փաստաթղթի»)՝ որպես տեղեկատվական աղբյուրի և մատենագիտական

օբյեկտի դերն ու արդիական նշանակությունը կրթական, գիտագործնական, տնտեսական, քաղաքական, տեխնոլոգիական և սոցիալ-հաղորդակցական ոլորտներում՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Ուշագրավ է նաև, որ այս տարի ՀԱԳ-ի համար նույնպես հոբելյանական տարի է. լրանում է նրա 190-ամյակը (1832-2022 թթ.): Գրադարան, որը հայկական գրադարանների շարքում աչքի է ընկնում առաջնակարգ դերով ու բազմաֆունկցիոնալ գործունեությամբ: 2020 թ. ՀԱԳ-ի ֆոնդի քանակը կազմել է 6.682.679 միավոր, ընթերցողների թիվը՝ 20.279, տաքքը՝ 880.076, հաճախումների թիվը՝ 162.996, իսկ աշխատողների թիվը՝ 337 [Հայաստանի գրադարանները, 2021, 72-73]:

Հետևություններ: Հայկական գրատպության պատմության զարգացումը Հայաստանում, հայկական սփյուռքում ու Արցախում կրել է համակարգային բնույթ: Աղբյուրների համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ դարերի ընթացքում ստեղծվել է հսկայածավալ տպագիր գրականություն, որի տեղեկատվական ազդեցությունը միջմշակութային, գիտակրթական, տեխնոլոգիական («թվայնացման») և սոցիալական հաղորդակցությունների զարգացման վրա աննկարագրելի մեծ է:

«Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի» գիտաժողովի խորագիրը, մեր կարծիքով, պետք է հավասարապես վերաբերի նաև արցախյան նոր պատերազմի հետևանքով աղբյուրներից հսկողության տակ մնացած հայկական մշակութային ժառանգությունը ոչնչացումից փրկելու խնդրին: Ելնելով ազգային մատենագիտության ամբողջականության սկզբունքից՝ չպետք է թույլ տալ որևէ գրքի, գրադարանային ֆոնդի կամ փաստաթղթային-տեղեկատվական աղբյուրի կորուստ:

SUMMARY

The history of Armenian book printing is one of the bright pages of the world culture and civilization. A comprehensive analysis has shown that thanks to the development of book printing a large number of books in different languages, periodicals and bibliographic publications were published, which by their meaning and functions influenced and continue influencing the development of intercultural, scientific, educational, technological (“digitalization”) and social communications.

The theme of the conference is “Heritage Preservation for Sustainable Future,” which also should equally refer to the problem of saving the Armenian cultural heritage from destruction, which remained under the control of Azerbaijanis as a result of the new Artsakh war. In order to contribute to this important matter, the author of the lines has proposed cooperation with the international library community participating in this conference.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալպոյաճյան Արշակ Ա., Չորսհարյուրամյակ հայ տպագրության. 1512-1912 // Կոչնակ շաբաթաթերթ: - Նյու Յորք, 1912. հունվ. 13.- № 2.- էջ 43-45; - հունվ. 20.- № 3.- էջ 64-67; - հունվ. 27.- № 4.- էջ 87-91; - փետր. 3.- № 5.- էջ 112-117:
2. Անդրեասյան Բ., Գիտական նիստ՝ նվիրված հայկական տպագրության 450-ամյակին // Պատմաբանասիրական հանդես, Երևան, ՀՀ ԳԱԱ, 1963, № 1 (20), էջ 297-298:
3. Բաբայան Ա. Ս., Հայ տպագրության 450-տարին // Պատմաբանասիրական հանդես, Երևան, ՀՀ ԳԱԱ 1963.- № 1 (20).- էջ 31-44:
4. Գարեգին Բ Կաթողիկոս, Հայ մարդը՝ հայ գիրքին դիմաց..., փորձ մը՝ Հայ գիրքի փիլիսոփայության, Բեյրութ, Անթիլիաս, 1990.- 149 էջ:
5. Դևրիկյան Վ. Գ., Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում / խմբ.՝ Վ. Եղիշյան: - Մաս Ա. Վենետիկից Հռոմ (16-րդ դար), Երևան, Զանգակ, 2012, 272 էջ:
6. Մաս Բ. Լվովից Ամստերդամ (17-րդ դար), Երևան, Զանգակ, 2014. 398 էջ:
7. Մաս Գ. Սուրբ Ղազարից Սուրբ Էջմիածին (18-րդ դար), Երևան, Զանգակ, 2016, 480 էջ:
8. Իշխանյան Ռ. Ա., Հակոբ Մեղապարտ, Երևան, Հայաստան, 1982, 71 էջ:
9. Իշխանյան Ռ. Ա., Հայ գիրքը 1512-1920, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1981, 154 էջ:

10. Լևոնյան Գ. Ջ., Հայ գիրքը և տպագրական արվեստը, Երևան, Հայպետհրատ, 1958, 255 էջ:
11. Հայաստանի գրադարանները 2020 թվականին: Աշխատանքների վիճակագրական վերլուծություն / կազմ.՝ Լ. Մուրադյան, Երևան, ՀԱԳ, 2021, 107 էջ:
12. Հայկազեան համալսարան: Հայ տպագրության 500-ամեակի ձեռնարկներ (5 մայիսի 2012-22 մարտի 2013), Պեյրուք, Անթիլիաս, 2014, 104 էջ:
13. Հայկական տպագրության 500-ամյակը (1512-2012): Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում: Հանրապ. գիտաժողովի (2010 թ. Ապրիլի 15-16) զեկուցումների ժողովածու / Խմբագիրներ՝ Ա. Վ. Գալստյան, Գ. Ա. Սուքիասյան, Երևան, Մանկավարժ, 2010, 132 էջ:
14. Մարտիրոսյան Ա. Ս., Թուրք-ադրբեջանական հայատյաց քաղաքականությունը և հայերի ուժացումը, Ստեփանակերտ, Դիզակ պլուս, 2009, 288 էջ (հայերեն և անգլերեն):
15. Մուրճ: Գրական, գեղարվեստական, քննադատական պարբերական: Բ տարի / Խմբագիր Ազատ Վշտունի (1894-1958), Երևան, Առաջին Կենտր. Խորհրդ. տպ., 1923, № 3, էջ 11:
16. Շուշին՝ հայկական մշակույթի օջախ: Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկույցներ, Շուշի, Կաճառ գիտ. կենտրոն, 2014, 240 էջ:
17. Սուքիասյան Գ. Ա., Գրքագիտություն և հայ գրատպության պատմագրություն: Նվիրվում է հայկ. տպագր. 500-ամյակին, Երևան, ՀԱԱ հրատ., 2013, 160 էջ:
18. Սուքիասյան Գ. Ա., Գիտաժողով՝ նվիրված հայ տպագրության 490-ամյակին (1512-2002) // Ազգ, Երևան, 2002, Մայիսի 7. № 83 (2528), էջ 6:
19. Սուքիասյան Գ. Ա., Երկու դար առաջ Շուշին գրատպության կենտրոն էր // Հայաստանի Հանրապետություն, 2018, օգոստոսի 1, № 142 (6898), էջ 4:
20. Սուքիասյան Գ. Ա., Գրադարանավարների միջազգային ֆորում Աստանայում // Հայաստանի Հանրապետություն, 2012, հոկտ. 4, № 180, էջ 6:
21. Սուքիասյան Գ. Ա., Ազգային լեզվով առաջին տպագրությունն իրականացնողները հայերն էին: Հայկական գրատպության 510-ամյակին ընդառաջ // Հայաստանի Հանրապետություն, 2021, նոյեմբեր 16, № 196 (7637), էջ 1, 6:
22. Богуславский М.М., Международная охрана культурных ценностей, Москва, Международные отношения, 1979, 192 с.
23. Владимиров Л.И., Всеобщая история книги, Москва, Книга, 1988, 312 с.
24. История книги: Учебник для вузов, Москва, МГУП, 1998, 346 с.
25. Соколов А. В., Национальная безопасность и национальная библиотека // Библиотекосведение, Москва, 2019, Том 68, № 3, С. 231-247.
26. Спафарий-Милеску Н. Г., Сибирь и Китай, Кишинев, Картя Молдовеняскэ, 1960, 516 с.
27. Столяров Ю. Н., Библиотека в экстремальной ситуации: учебно-практ. пособие, Москва, Бибком, 2007, 464 с.
28. Шрайберг Я. Л., Земсков А. И. и др., Авторское право и библиотеки, Москва, ГПНТБ России, 2007, 48 с.